ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-3

ք. Երևան «20» 05 2020թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճանապարհ» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Է. Բեզոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Հ-31, /Մ-1/ - Վարդաղբյուր - Տաշիր - /Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ35+300 - կմ45+300 հատվածի և S-5-57, /Հ-33/ (Լոռի Բերդ) - Լեջան-/Հ-33/ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ3+800 հատվածի հիմնանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց Չափաբաժին 3՝ 210 օր հետո, Չափաբաժին 6՝ 180 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ծեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1,278,745,860(մեկ միլիարդ երկու հարյուր յոթանասունութ միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որից 213,124,310 (երկու հարյուր տասներեք միլիոն հարյուր քսանչորս հազար երեք հարյուր տասը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

3-րդ չափաբաժին 1,006,800,000 (մեկ միլիարդ վեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որից 167,800,000 (մեկ հարյուր վաթսունյոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

6-րդ չափաբաժին 271,945,860 (երկու հարյուր յոթանասունմեկ միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ որից 45,324,310 (քառասունհինգ միլիոն երեք հարյուր քսանչորս հազար երեք հարյուր տասը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան. Կառավարական տուն 3.	ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«ԱրդշինԲանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ
ՀՀ 900011025823	ՀՀ 2472300165260010
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 03512651
գլխավոր քարտուղար	Գլխավոր տնօրեն
Հ. Բատիկյան	Է. Բեզոյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 20 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-3 ծածկագրով պայմանագրի

ՀԱՓԱԲԱԺԻՆ 3
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ-31, /Մ-1/ - Վարդաղբյուր - Տաշիր - /Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ35+300 - կմ45+300 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի արժեքը (դրամ)	Ընդհանուր արժեքը (դրամ)
1	2	3	4	5	6
I	**Նախապատրաստական աշխատանքներ**				
1	Գոյություն ունեցող դիտահորերի սալերի ապատեղակայում/ 5 հատ ոչ պիտանի սալերը տեղափոխել լցակույտ 8կմ/	հատ	6	3 550	21 300
2	Գոյություն ունեցող դիտահորերի բարձրացում միաձույլ բետոնով B20/6 հատ/	մ³	0.6	72 840	43 704
3	Ապատեղակայված սալի տեղակայում	հատ	1	14 000	14 000
4	Նոր սալերի և նոր կափարիչների տեղակայում 1.2x1.2x0.2մ չափսի	հատ	5	146 000	730 000
	1.Ընդամենը				**809 004**
II	**Հողային աշխատանքներ**				
1	Ա/բ պատվածքի քանդում բուլդոզերով, տեղափոխում 50մ կուտակումով, բարձում էքսկավատորով(0.65մ³), տեղափոխում լցակույտ 8.0կմ	մ³	570	3 278	1 868 460
2	IV10ե գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	մ³	1190	455	541 450
3	IV10ե գրունտի մշակում, բարձում էքսկավատորով, տեղափոխում լիցք 1.0կմ	մ³	710	1 100	781 000
4	Նույնը տեղափոխում լիցք 2կմ	մ³	460	1 266	582 360
5	III10դ գրունտի մշակում , բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում պահուստից 5.0կմ-ից/պայմանական/ լիցքի իրականացման համար	մ³	1400	2 730	3 822 000
6	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ³	3830	364	1 394 120
7	Կողային առուների ակոսահանում մեխանիզմով	մ³	370	2 276	842 120
	2.Ընդամենը				**9 831 510**
III	**ճանապարհային պատվածք**				
	I տիպ /օգտագործվում է գոյություն ունեցող ճանապարհային պատվածքը/				
1	Ավազակոպճային շերտ h=5սմ	մ²	66663	320	21 332 160
2	Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի վերօգտագործում սառը վերամշակման եղանակով հմիջ.=20սմ, ցեմենտի ավելացումով 1մ²-16կգ	մ²	66663	2 530	168 657 390
3	Տաք, ծակոտկեն խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	66663	5 420	361 313 460
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	66663	4 100	273 318 300

	II տիպ /նոր պատվածք Տաշիր քաղաքում/				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	6431	637	4 096 547
2	Չափազատված խիճ h=12սմ ,բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	6431	2 822	18 148 282
3	Տաք, ծակոտկեն խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	6431	5 417	34 836 727
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	6431	4 100	26 367 100
	3.Ընդամենը				**908 069 966**
IV	**Կողնակներ**				
1	Կողնակների ամրացում կոպճային խառնուրդով h=10սմ	մ²	38400	592	22 732 800
	4.Ընդամենը				**22 732 800**
V	**Մայթեր**				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	1253.4	12 750	15 980 850
2	Մայթերի խճային հիմք h=12սմ	մ²	1501.5	1 820	2 732 730
3	Մանրահատիկա/բետոն h=3սմ	մ²	1501.5	3 460	5 195 190
4	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ չափսի B15 /973.2 գծ.մ/	մ³	19.46	65 000	1 264 900
	5.Ընդամենը				**25 173 670**
VI	**Թեքուղիներ**				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	122.4	12 750	1 560 600
	6.Ընդամենը				**1 560 600**
VII	**Ուղիներ**				
1	Ավազակոպճային շերտ մետաղական խողովակի տակ h=10սմ	մ³	1.2	5 460	6 552
2	Մետաղական խողովակների տեղադրում d=720մմ; 1գծ.մ=141գ; δ=8մմ	գծ.մ	9	109 300	983 700
3	Խողովակի գլխադիրի միաձույլ բետոն B15	մ³	2.7	64 000	172 800
4	Գոյություն ունեցող խողովակների բետոնե գլխադիրների կրկնակի սվաղ ավազացեմենտե շաղախով	մ²	24	3 460	83 040
5	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	20.34	1 800	36 612
6	Գոյություն ունեցող խողովակների մաքրում ձեռքով, բարձում, տեղափոխում լցակույտ 8.0կմ/4 հատ/	մ³	24	6 830	163 920
7	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	683.3	640	437 312
8	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	1650.4	2 780	4 588 112
9	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	1607.6	5 100	8 198 760
10	ՊԿ97+55-ում բետոնե ծածկի քանդում ձեռքով h=15սմ , բարձում, տեղափոխում լցակույտ 8.0կմ	մ³	2	7 740	15 480
	7.Ընդամենը				**14 686 288**
VIII	**Մուտքեր**				
1	Մուտքերի տակ գոյություն ունեցող խողովակների մաքրում ձեռքով, բարձում, տեղափոխում լցակույտ 8.0կմ/ 3 հատ/	մ³	18	7 740	139 320

2	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	393	2 820	1 108 260
3	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	393	4 100	1 611 300
	8.Ընդամենը				**2 858 880**
IX	**Արհեստական կառուցվածքներ**				
Ա.	**Ե/բ կամուրջ ՊԿ77+12 L=8.0մ թռիչքով**				
1	Տեղաշարժված ուղղոդող պատի քանդում կամրջի կողմից 1.5գծ.մ երկարությամբ/2x0.33x1.5մ/	մ³	1	34 228	34 228
2	Նույնի վերականգնում /թեքությամբ միանալով գոյություն ունեցող հենարանին/				
3	Հիմքի միաձույլ բետոն B20	մ³	0.4	65 000	26 000
4	Իրանի միաձույլ բետոն B20	մ³	1	65 000	65 000
5	Հունի ուղղում և կամրջատակի բերվածքների մաքրում ձեռքով, բարձում, տեղափոխում լցակույտ 8.0կմ	մ³	5	7 740	38 700
6	Թռիչքային կառուցվածքի տակի մակերևույթի և կողերի քայքայված բետոնի մաքրում բարձր ճնշման ավազեշիթով և տորկրետ ավազացեմենտե շաղախով h=3սմ	մ²	5	5 920	29 600
7	Գրունտի քանդում ձեռքով/h=15սմ/, բարձում, տեղափոխում լցակույտ 8.0կմ	մ³	14.3	7 740	110 682
8	Հարթեցնող շերտի իրականացում h=3-13սմ ավազացեմենտե շաղախով	մ³	7.6	25 500	193 800
9	Ջրամեկուսացում техноэласт Б-ով	մ²	95	5 900	560 500
10	Ամրանավորված բետոնե հարթեցնող շերտ h=4սմ B25	մ²	95	4 100	389 500
	մետաղական ցանց 5Вр-1 100x100մմ	մ²	95	1 100	104 500
11	Մանրահատիկ ա/բ h=4սմ	մ²	95	4 100	389 500
12	Մանրահատիկ ա/բ h=3սմ	մ²	95	3 460	328 700
13	Միաձույլ բետոնե եզրապատեր B20(0.4x0.8x9մ)x2	մ³	5.8	65 000	377 000
14	Եզրապատերի սվաղում և ներկում	մ²	37.3	3 820	142 486
Բ.	**Գոյություն ունեցող 1.0մ երկարությամբ կամարաձև կամուրջների նորոգում**				
1	Կամուրջների պարապետների շրջված քարերի տեղադրում/10 գծ.մ/	մ²	0.25	22 760	5 690
2	Կամուրջների ներսի և դրսի մաքրում ձեռքով, բարձում, տեղափոխում լցակույտ 8.0կմ	մ³	19	7 740	147 060
3	Կամուրջների ներսում վաքի իրականացում				
.	Ավազակոպճային շերտh=15սմ	մ³	3.9	8 190	31 941
.	Միաձույլ բետոնե վաք B20	մ³	4.96	65 000	322 400
Գ.	**Եզրապատեր**				
1	Գոյություն ունեցող եզրապատերի բարձրացում միաձույլ բետոնով B20	մ³	23	65 000	1 495 000
2	Եզրապատերի սվաղում և ներկում	մ²	272	3 820	1 039 040
Դ.	**Մետաղական բազրիքներ**				
1	IV 10ե գրունտի մշակում, բարձում, ձեռքով, տեղափոխում լցակույտ 8.0կմ	մ³	1.5	7 740	11 610
2	Հիմքի միաձույլ բետոն B15	մ³	1.38	65 000	89 700

3	Մետաղական բազրիքների իրականացում և ներկում -60հատվածամաս	տոն	1.917	528 000	1 012 176
4	Ներդիր էլեմենտներ/պատի վրա/				
	պողպատե թիթեղ 200x200x10մմ	մ²	0.72	72 850	52 452
	Ամրան AIIIØ12մմ	տոն	0.00954	450 000	4 293
5	Մետաղական բազրիքների իրականացում/պատի վրա/ և ներկում - 18հատվածամաս	տոն	0.575	528 000	303 600
6	Գոյություն ունեցող պատի բարձրացում միաձույլ բետոնով/45x0.4x0.5/ հմիջ.=40սմ B20	մ³	9	65 000	585 000
Ե.	**Ցանցապարկեր**				
1	Ցանցապարկերի տեղադրում 3x1x1մ չափսի (ցինկապատ)	հատ	30	68 200	2 046 000
2	Ցանցապարկերի տեղադրում 1x0.5x3մ չափսի (ցինկապատ)	հատ	16	54 600	873 600
	9.Ընդամենը				**10 809 758**
X	**Ճանապարհի կահավորում**				
Ա.	**Ճանապարհային նշաններ**				
	Նախազգուշացնող	հատ	2	28 000	56 000
	Առավելության	հատ	36	28 000	1 008 000
	Արգելող	հատ	2	28 000	56 000
	Հատուկ թելադրանքի	հատ	14	28 000	392 000
	Տեղեկատվության	հատ	11	30 000	330 000
	Արհեստական խոչընդոտ h=6սմ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ	տոն	11.5	40 000	460 000
Բ.	**Արգելափակոցներ**				
	Գոյություն ունեցող ե/բ ազդանշանային սյուների քանդում	հատ	17	2 000	34 000
	C1 տիպի պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	800	5 000	4 000 000
Գ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**				
	1.1	կմ	19.4636	140 000	2 724 904
	1.5	կմ	9.722	110 000	1 069 420
	1.6	կմ	0.1	100 000	10 000
	1.8	կմ	0.525	100 000	52 500
	1.25	մ²	6.2	3 000	18 600
	1.14.1	մ²	18.7	3 000	56 100
	10.Ընդամենը				**10 267 524**
	Ընդհանուրը* (դրամ)				**1 006 800 000**

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%:

** Կապալառուն աշխատանքները կատարում է Հ-31, /Մ-1/ - Վարդաղբյուր - Տաշիր - /Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ35+300 - կմ45+300 հատվածի հասցեներում:

ՉԱՓԱԲԱԺԻՆ 6
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

S-5-57, /Հ-33/ (Լոռի Բերդ)- Լեջան-/Հ-33/ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ3+800 հատվածի հիմանորոգման աշխատանքների

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի արժեքը (դրամ)	Ընդհանուր արժեքը (դրամ)
1	2	3	4	5	
I	**Նախապատրաստական աշխատանքներ**				
1	Գոյություն ունեցող ցանցե ցանկապատերի քանդում և տեղափոխում	գծ.մ	81	10 200	826 200
	1.Ընդամենը				**826 200**
II	**Հողային աշխատանքներ**				
1	III10դ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	մ³	490	450	220 500
2	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ³	490	700	343 000
3	III10դ գրունտի մշակում , բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	2650	1 390	3 683 500
4	III10դ գրունտի մշակում , տեղափոխում բուլդոզերով 50մ կուատկումով, բարձում էքսկավատորով (0.65մ³), 2.0կմ	մ³	290	1 600	464 000
5	Կողային առուների ակոսահանում մեխանիզմով	մ³	1650	2 500	4 125 000
	2.Ընդամենը				**8 836 000**
III	**Ճանապարհային պատվածք**				
Ա.	**Տաշտակի կառուցում լայնացված մասերում**				
	III10դ գրունտի մշակում , բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	562	1 390	781 180
Բ.	**I տիպ/օգտագործվում է գոյություն ունեցող պատվածքը/**				
1	Փոսային նորոգում h=3-5սմ	մ²	220	5 500	1 210 000
2	Փոսային նորոգում h=5-12սմ	մ²	150	8 000	1 200 000
3	Փոսային նորոգում հիմքով				
.	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	170	3 050	518 500
.	Տաք, մանրահատիկ ա/բետոն h=6սմ	մ²	170	6 000	1 020 000
4	Հարթեցնող շերտ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ հմիջ.=3սմ	տոն	376.4	41 000	15 432 400
5	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	10678	5 600	59 796 800
Գ.	**II տիպ/նոր պատվածք/**				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	12380	700	8 666 000
2	Չափազատված խիճ h=14սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	12380	3 050	37 759 000
3	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	12380	5 600	69 328 000
	3.Ընդամենը				**195 711 880**
IV	**Կողնակներ**				

1	Ցամաքուրդային գրունտի տեղափոխում պահուստից միջինը 3.0կմ-ից կողնակների իրականացման համար	մ³	768.7	1 600	1 229 920
2	Կողնակների հարթեցում և խտացում պնևմոգլդոնով 1 հետքով 4 անցումով h=10սմ շերտ հաստությամբ, ջրի տարածումով	մ²	7686.5	80	614 920
	4.Ընդամենը				**1 844 840**
V	**Ուղիներ**				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	355.4	700	248 780
2	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	888.3	3 050	2 709 315
3	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	871.1	5 600	4 878 160
4	Ուղիների տակ խողովակների գլխադիրների իրականացում միաձույլ բետոնով B15	մ³	0.6	68 000	40 800
	5.Ընդամենը				**7 877 055**
VI	**Մուտքեր**				
1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ³	5.84	7 000	40 880
2	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	87.3	35 000	3 055 500
3	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	89.1	2 800	249 480
4	Գլխադիրների միաձույլ բետոն B15	մ³	4.5	68 000	306 000
5	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	280.1	700	196 070
6	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	535.2	3 050	1 632 360
7	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	534.3	4 500	2 404 350
	6.Ընդամենը				**7 884 640**
VII	**Մայթեր**				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	1336.5	15 000	20 047 500
2	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ²	1689	750	1 266 750
3	Մանրահատիկա/բետոն h=3սմ	մ²	1689	3 800	6 418 200
4	Միաձույլ բետոնե եզրաշար 0.1x0.2 B15	մ³	24.91	68 000	1 693 880
	7.Ընդամենը				**29 426 330**
VIII	**Թեքուղիներ**				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	89.4	15 000	1 341 000
	8.Ընդամենը				**1 341 000**
IX	**Բետոնե վաքեր/գոյություն ունեցող/**				
1	Գոյություն ունեցող վաքերի մաքրում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	44	5 000	220 000
2	Գոյություն ունեցող վաքերի նորոգում ավազացեմենտե շաղախով /կրկնակի սվաղ/	մ²	168	2 800	470 400
3	Գոյություն ունեցող վաքերի ապատեղակայում, տեղակայում նոր տեղում-	գծ.մ	35	7 000	245 000
4	Քայքայված վաքերի տեղում նոր ե/բ հավաքովի վաքերի տեղադրում L=3.0մ	հատ	8	57 000	456 000
5	Նոր վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	30.24	2 500	75 600

6	Ավազակոպճային շերտ վաքերի տակ h=10սմ	մ³	2.95	7 000	20 650
	9.Ընդամենը				**1 487 650**
X	**Բետոնե վաքեր/նոր տեղադրվող/**				
1	Ավազակոպճային շերտ վաքերի տակ h=10սմ	մ³	27.9	7 000	195 300
2	Նոր ե/բ հավաքովի վաքերի տեղադրում L=3.0մ	հատ	186	51 000	9 486 000
3	Վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	703.08	2 500	1 757 700
	10.Ընդամենը				**11 439 000**
XI	**ՊԿ25+37 ուղու վրա ջրընդունիչի կառուցում L=12գծ.մ/34x30սմ չափսի վաքի վրա/**				
1	Վաքի վրա մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում	տոն	0.42408	280 000	118 742
.	Մետաղական շվելեր N8 ; 1գծ.մ=7.05կգ	գծ.մ	24	4 600	110 400
.	Մետաղական շվելեր N6.5; 1գծ.մ=5.9կգ	գծ.մ	43.2	4 000	172 800
	11.Ընդամենը				**401 942**
XII	**Մետաղական խողովակ d=720մմմ**				
1	III10դ գրունտի մշակում , բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	12	6 500	78 000
2	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	12	4 000	48 000
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	1.2	7 000	8 400
4	Մետաղական խողովակների տեղադրում d=720մմ; 1գծ.մ=141գ; δ=8մմ	գծ.մ	9	133 000	1 197 000
5	Գլխադիրի միաձույլ բետոն B15	մ³	1.35	68 000	91 800
6	Ջրհորի միաձույլ բետոն B15	մ³	1.08	68 000	73 440
7	Ջրհորի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	6.7	3 000	20 100
8	մետաղական շրջանակ L40x40x4մմ; 1գծ.մ-2.42կգ	կգ	6.8	600	4 080
	մետաղական ճաղաշար AIIIØ12մմ; 1 գծ.մ=0.888կգ	կգ	9.23	420	3 877
9	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	20.4	3 000	61 200
10	Հետադարձ լիցք	մ³	12	500	6 000
	12.Ընդամենը				**1 591 897**
XIII	**Ճանապարհի կահավորում**				
Ա.	**Ճանապարհային նշաններ**				
	Նախազգուշացնող	հատ	8	33 000	264 000
	Առավելության	հատ	16	33 000	528 000
	Արգելող	հատ	2	33 000	66 000
	Հատուկ թելադրանքի	հատ	8	33 000	264 000
	Տեղեկատվության	հատ	5	36 000	180 000
	Լրացուցիչ տեղեկատու	հատ	2	36 000	72 000
	Արհեստական խոչընդոտ h=6սմ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ	տոն	4	45 000	180 000
Բ.	**Արգելափակոցներ**				
	C1 տիպի պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	244	5 100	1 244 400
	Ջրանցքի երկու կողմերում բետոնե պարապետ B20(0.4x0.5x5)մx2	մ³	2	77 998	155 996

Գ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**				
	1.1	կմ	0.119	140 000	16 660
	1.5	կմ	3.487	70 000	244 090
	1.6	կմ	0.194	120 000	23 280
		մ²	8.4	2 500	21 000
		մ²	7.2	2 500	18 000
	13.Ընդամենը				**3 277 426**
	Ընդհանուրը* (դրամ)				**271 945 860**

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%:

** Կապալառուն աշխատանքները կատարում է S-5-57, /Հ-33/ (Լոռի Բերդ)- Լեջան-/Հ-33/ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ3+800 հատվածի հասցեներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան. Կառավարական տուն 3.
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ
«ԱրդշինԲանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ
ՀՀ 2472300165260010
ՀՎՀՀ 03512651
Գլխավոր տնօրեն
Է.Բեգոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 20 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-3 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 3
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Հ-31, /Մ-1/ - Վարդաղբյուր - Տաշիր - /Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ35+300 - կմ45+300 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 210 օր հետո
1	Նախապատրաստական աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 45 օր հետո
2	Հողային աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո
3	ճանապարհային պատվածք	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 170 օր հետո
4	Կողնակներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 185 օր հետո
5	Մայթեր և թեքուղիներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 120 օր հետո
6	Ուղիներ և մուտքեր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո
7	Արհեստական կառուցվածքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 100 օր հետո
8	Անվտանգության էլեմենտներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 210 օր հետո

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 210 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը

ՀԱՎԵԼՎԱԾ 6
ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

S-5-57, /Հ-33/ (Լոռի Բերդ)- Լեջան-/Հ-33/ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ3+800 հատվածի հիմանորոգման աշխատանքների

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո
1	Նախապատրաստական աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 50 օր հետո
2	Հողային աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 օր հետո
3	Ճանապարհային պատվածք	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 160 օր հետո
4	Կողնակներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 165 օր հետո
5	Ուղիներ և մուտքեր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 165 օր հետո
6	Մայթեր և թեքուղիներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 100 օր հետո
6	Բետոնե վաքեր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 100 օր հետո

7	**Խողովակներ**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո
8	**Անվտանգության էլեմենտներ**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը**

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան. Կառավարական տուն 3.
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ
«ԱրդշինԲանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ
ՀՀ 2472300165260010
ՀՎՀՀ 03512651
Գլխավոր տնօրեն
Է. Բեգոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 20 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	45231177/504	ճանապարհների վերանորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
6	45231177/507	ճանապարհների վերանորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են դրամով, իսկ պայմանագիրը կնքելիս դրամի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան. Կառավարական տուն 3.
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ
«ԱրդշինԲանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ
ՀՀ 2472300165260010
ՀՎՀՀ 03512651
Գլխավոր տնօրեն
Է. Բեգոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 20 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » « » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն